

# ՏԵՂԵԿԱՆՔ

2023 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՌԱԶԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ  
ՀՀ ԵՎ ԱՀ /ԼՂ/ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ  
ՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեղինակներ՝ Նազելի Մովսեսյան  
Անուշ Պետրոսյան  
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքի թողարկումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի օժանդակության շնորհիվ:

Տեղեկանքում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

## ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) ներկայացնում է **2023 թվականի առաջին կիսամյակում** Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Արցախի Հանրապետության/Լեռնային Ղարաբաղի (ԱՀ/ԼՂ) զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տվյալները, որոնք հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով և պաշտոնական աղբյուրներով տարածված տեղեկությունների, ինչպես նաև Կազմակերպության կողմից պաշտոնական կառույցներին (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե) ուղղված տեղեկատվության հարցումների պատասխանների հիման վրա:

*Կազմակերպության կողմից ամփոփած տեղեկությունների համաձայն՝ 2023 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում գրանցվել է 52 զինծառայողի մահվան դեպք:*

Մահվան 52 դեպքերի պատճառներն են.

- 15-ը՝ զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում,
- 13-ը՝ հրադադարի ռեժիմի խախտում,
- 9-ը՝ ավտովթար,
- 8-ը՝ առողջական խնդիրներ,
- 5-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնել,
- 2-ը՝ դժբախտ պատահար:


Համեմատության համար նշենք, որ 2022 թ. առաջին կիսամյակում գրանցվել է ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերի 30 զինծառայողի մահվան դեպք, որից

- 9-ը՝ հրադադարի ռեժիմի խախտում,
- 7-ը՝ ավտովթար,
- 7-ը՝ առողջական խնդիրներ,
- 4-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնել,

- 2-ը՝ սպանություն (1-ը՝ ԶՕԿ, 1-ը սպանություն այլ անձի կողմից՝ ծառայության հետ չկապված),
- 1-ը՝ դժբախտ պատահար (հոսանքահարում):

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2022 և 2023 թթ. առաջին կիսամյակներում մահացած զինծառայողների թիվն ըստ պատճառների և ամիսների:

Գծապատկեր 1. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2022 և 2023 թթ. առաջին կիսամյակներում մահացած զինծառայողների թիվն ըստ պատճառների և ամիսների



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, 2023 թ.-ի առաջին կիսամյակում մահվան դեպքերի ընդհանուր թիվը 2022 թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 73 %-ով: 2022 թ. առաջին կիսամյակի համեմատ 2023 թ. նույն ժամանակահատվածում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը աճել է 44 %-ով (9 և 13 դեպք համապատասխանաբար), դժբախտ պատահարի հետևանքով մահվան դեպքերի թիվը 1-ով (1 և 2 դեպք համապատասխանաբար), ավտովթարի հետևանքով մահվան դեպքերի թիվը 29 %-ով (7 և 9 դեպք համապատասխանաբար), ինքնասպանության հետևանքով մահվան դեպքերի թիվը 25%-ով (4 և 5 դեպք համապատասխանաբար), առողջական խնդիրների հետևանքով մահվան դեպքերի թիվը 14 %-ով (7 և 8 դեպք համապատասխանաբար):

2022 թ-ին զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտման հետևանքով մահվան դեպքեր չէին արձանագրվել:


Ինչ վերաբերվում է սպանություն որակված մահվան դեպքերին, ապա ի տարբերություն 2022 թ. առաջին կիսամյակի 2023 թ.-ի նույն ժամանակահատվածում նման դեպքեր չեն արձանագրվել:

***Այսպիսով, 2023 թվականի առաջին կիսամյակում գրեթե բոլոր պատճառներով զինձառայողների մահվան դեպքերի թիվը գերազանցում է 2022 նույն ժամանակահատվածում մահացած զինձառայողների թվին, բացի սպանության հետևանքով մահվան դեպքերի, որպիսիք, ինչպես արդեն նշվեց, 2023 թ-ին չեն արձանագրվել:***

2023 թվականի առաջին կիսամյակում գրանցված մահվան դեպքերի մեծ մասը՝ 15-ը, տեղի է ունեցել հունվարի 19-ին, երբ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում բռնկված հրդեհի հետևանքով մահացան 15 ժամկետային զինձառայողներ: *(դեպքի մանրամասները տե՛ս հավելված 2-ում)*

Գծապատկեր 2-ում ներկայացված են 2022 և 2023 թթ. առաջին կիսամյակներում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության դեպքերն ըստ պատճառների:

Գծապատկեր 2. 2022 և 2023 թթ. առաջին կիսամյակներում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության դեպքերն ըստ պատճառների



2023 թ. արձանագրված մահացության դեպքերից մոտ 25 %-ը տեղի են ունեցել հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձանագրվել է դեպքերի, իսկ 75 %-ը՝ ոչ մարտական պայմաններում (29 %-ը զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտման, 15 %-ը առողջական խնդիրների, 17 %-ը ավտովթարի, 10 %-ը ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 4 %-ը՝ ղժբախտ պատահարի հետևանքով):

Նշենք, որ 2022 թ. առաջին կիսամյակում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձանագրվել է մահացության դեպքերի 30 %-ը, իսկ 70 %-ը արձանագրվել է ոչ մարտական պայմաններում, մասնավորապես՝ 23 %-ը ավտովթարի հետևանքով, 23 %-ը՝ առողջական խնդիրների, 13 %-ը՝ ինքնասպանության, 8 %-ը՝ սպանության, 3 %-ը՝ ղժբախտ պատահարի:

### ***Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքեր***

Եթե համեմատենք 2022 և 2023 թվականներին հրադադարի ռեժիմի խախտման (30 % և 25 %) պայմաններում զինծառայողների մահվան դեպքերի հարաբերակցությունը, ապա կտեսնենք, որ դրանք գրեթե նույնն են:

Մինչդեռ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ 2023 թ.-ի առաջին կիսամյակում մահվան դեպքերի ընդհանուր թիվը 2022 թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 73 %-ով և 2023 թ.-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերի թվի աճը զգալի է (2022 թ. 9 դեպք, 2023 թ.՝ 13 դեպք):

Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերի մեծ մասը տեղի են ունեցել 2023 թ. ապրիլ և հունիս ամիսներին (4-ական դեպք):

2023 թ. ապրիլին Ադրբեջանի զինված ուժերը կրակ են բացել մի քանի ուղղություններով, մասնավորապես՝ Տեղ համայնքի ուղղությամբ ինժեներական աշխատանքներ իրականացնող ՀՀ ՋՈՒ զինծառայողների ուղղությամբ, ինչի հետևանքով մահացել են 4 զինծառայողներ (3 սպա, 1 պայմանագրային զինծառայող), ինչպես նաև Սոթքի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով դադարեցվել են Սոթքի ոսկու հանքավայրի աշխատանքները, աշխատակիցները տարհանվել են:

2023 թ. հունիսի 28-ին Արցախում՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացան 4 զինծառայող՝ 2-ը՝ պայմանագրային, 2-ը պահեստագորային:

2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանը շարունակում է դրսևորել նույն մոտեցումը՝ ՀՀ ՋՈՒ ուղղությամբ կրակելուց առաջ կեղծ տեղեկություններ տարածելով այն մասին, թե իբր ՀՀ զինված ուժերն են նախաձեռնում հրադադարի ռեժիմի խախտումը:

Ի դեպ, Կազմակերպությունը պարբերաբար ուսումնասիրում և անփոփում էր նաև ԼՂ/ԱՀ պաշտպանության բանակի պաշտոնական կայքէջում հրապարակված հաղորդագրությունները հրադադարի ռեժիմի խախտման քանակի վերաբերյալ: Սակայն 2021 թվականից ի վեր նման հաղորդագրություններ չեն հրապարակվում: Բացի այդ, նշված կայքէջը պատշաճ չի աշխատում և այժմ հաղորդագրություններ ու հրապարակումներ հնարավոր չէ գտնել:



Ինչ վերաբերում է 2023 թ. առաջին կիսամյակում մահացած պահեստագորայինների մահվան դեպքերին ապա նշենք, որ նշված ժամանակահատվածում մահացած 2 պահեստագորայինների մահվան պատճառը հրադադարի ռեժիմի խախտումն է: 2022 թ. առաջին կիսամյակում պահեստագորում հաշվառված 1 անձի մահացել է ինքնասպանության հետևանքով:

***Ինքնասպանության (ինքնասպանության հասցնելու) և սպանության հետևանքով մահվան դեպքեր***

2023 թ. առաջին կիսամյակում արձանագրվել է ինքնասպանության 5 դեպք, որոնցից 4-ը ժամկետային զինծառայողներ են, 1-ը՝ պայմանագրային զինծառայող: Սպանություն որակված դեպքեր նշված ժամանակահատվածում չեն արձանագրվել:

Համեմատության համար նշենք, որ 2022 թ. առաջին կիսամյակում ՀՀ զինված ուժերում ինքնասպանության և սպանության հետևանքով արձանագրվել է ընդհանուր 7 դեպք (29 %-ով ավելի), որից ինքնասպանության հետևանքով 4 դեպք (25 %-ով ավելի), սպանության հետևանքով՝ 3 դեպք: Ինքնասպանության հետևանքով 2022 թ. առաջին կիսամյակում մահացել է 3 ժամկետային, 1 պահեստագորային զինծառայող, իսկ սպանության հետևանքով 2 ժամկետային, 1 պայմանագրային զինծառայող:

Ամփոփելով, նկատենք, որ ինքնասպանության և սպանության հետևանքով մահացությունների մեջ շարունակում են մեծ թիվ կազմել ժամկետային զինծառայողները:

ՀՀ զինված ուժերում սպանության և ինքնասպանության դեպքերի առկայությունը փաստում է զինված ուժերում շարունակվող ոչ կանոնադրային հարաբերությունների առկայության մասին:

2023 թվականին ՀՀ կառավարության հնգամյա (2021-2026 թթ.) ծրագրով նախատեսված զինված ուժերի բարեփոխումների գնահատման վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հրապարակած տեղեկանքում անդրադարձել ենք զինված ուժերում դեռևս 2013 թվականից ներդրված սպա-հոգեբանների կարևորությանը: Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Factor.am-ին<sup>1</sup> տրամադրած տեղեկատվության՝ սպա-հոգեբանը ի լրումն այլ գործառույթների պետք է մասնակցի

<sup>1</sup> <https://factor.am/652501.html>

ստորաբաժանումների և առանձին զինծառայողների հոգեբանական պատրաստության գործընթացին, զինծառայողների շրջանում իրականացնի հոգեբանական աջակցման աշխատանքներ, պետք է կատարի ուսումնասիրություններ ստորաբաժանումներում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական գործընթացների և առանձին զինծառայողների վարքի կանխատեսումների վերաբերյալ: Ցավոք, այս ինստիտուտը դեռևս արդյունավետ չի գործում, ինչի մասին են վկայում զինված ուժերում քրեական հանցագործությունների վերաբերյալ առկա տեղեկությունները, զինված ուժերում ինքնասպանությունների կամ ինքնասպանության հասցնելու դեպքերը և ոչ կանոնադրային հարաբերությունների փաստերի մասին տեղեկությունները:

**Չնայած ՀՀ ՊՆ այն պնդմանը, որ ոչ կանոնադրային փոխհարաբերությունների դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ դեպքի հանգամանքները, դրանց առաջացմանը նպաստող գործոնները, ծառայության կազմակերպման ու իրականացման գործընթացներում տեղ գտած թերություններն ու բացթողումները պարզելու համար, սակայն զինված ուժերում ինքնասպանության և սպանության հետևանքով մահվան դեպքերի առկայությունը վկայում է շարունակվող ոչ կանոնադրային հարաբերությունների առկայության մասին:**

### ***Առողջական խնդիրների հետևանքով մահվան դեպքեր***

2023 թ. առաջին կիսամյակում առողջական խնդիրների հետևանքով մահացած 8 զինծառայողներից 4-ի (2 պայմանագրային զինծառայողի, 1 սպայ, 1 ԵԿՄ անդամի) մահվան դեպքը ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից համարվել է ծառայության հետ կապված: Մյուս 4 դեպքերը, որոնց հետևանքով մահացել են 3 պայմանագրային զինծառայող և 1 ենթասպա, համարվել են զինվորական ծառայության հետ չկապված:

Ծառայության հետ կապված երկու մահվան դեպքերը տեղի են ունեցել մարտական դիրքում: Մեկ դեպքում մահացել է երկրապահ կամավորական միության անդամ, մյուս դեպքում՝ սպա: Մյուս երկու պայմանագրային զինծառայողների դեպքում հայտնի չէ, թե վերջիններս գտնվել են մարտական դիրքերում թե այլ վայրում:

Երկու պայմանագրային զինծառայողների և մեկ սպայի մահվան պատճառ են հանդիսացել սրտի իշեմիկ հիվանդությունները, ԵԿՄ անդամի առողջական խնդրի մասին տեղեկություններ դեռևս հայտնի չեն:

Զինվորական ծառայության հետ չկապված մահվան 3 դեպքերն արձանագրվել են, երբ զինծառայողները գտնվել են ծառայության վայրից դուրս: Մահացած զինծառայողներից մեկը հանդիսացել է սպա, երկրորդը՝ ենթասպա, երրորդը՝ պայմանագրային զինծառայող: Նրանցից մեկի առողջական խնդրի մասին հայտնի չէ: Մյուս զինծառայողներից մեկը մահացել է ինֆարկտի, իսկ մյուսը՝ բրոնխիտ՝ ասթմա՝ մահվան պատճառ է հանդիսացել զարկերակային հիպերտենզիան և բրոնխիալ ասթման:

Համեմատության համար նշենք, որ 2022 թ. առաջին կիսամյակում առողջական խնդիրների հետևանքով 7 դեպքերից միայն 1 պայմանագրային զինծառայողի մահվանվան դեպքն է համարվել զինվորական ծառայության հետ կապված: Մյուս 6 դեպքերը, որի հետևանքով մահացել են 3 սպա, 3 պայմանագրային զինծառայող, համարվել են զինվորական ծառայության հետ չկապված:

«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը սահմանում է զինծառայողների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, բուժկանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ օրենքի հոդված 344-ը սահմանում է, որ զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝

- անձնակազմի ամենօրյա հսկողություն մարտական նախապատրաստության ընթացքում և կենցաղում,
- զինծառայողների բուժզննում,
- զինծառայողների խորացված և հսկիչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ:

*Ակնհայտ է, որ զինծառայության ընթացքում կամ չեն իրականացվում պլանային բժշկական զննություններ կամ դրանք իրականացվում ոչ արդյունավետ՝ առողջական խնդիրները (այդ թվում նաև՝ քրոնիկ հիվանդությունները) վաղ փուլում հայտնաբերելու և դրանց զարգացումը կանխելու տեսանկյունից:*

Անդրադառնալով է վարժական հավաքների ընթացքում առողջական խնդիրների հետազոտությանը, նշենք, որ Կազմակերպությունը բազմիցս ընդգծել է վարժական հավաքների կազմակերպման և անցկացման ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից պահեստագորայինների առողջական վիճակի համալիր գննության իրականացման կարևորությունը:

ՀՀ-ում սկսեցին պարբերաբար վարժական հավաքներ անցկացվել 2021 թ-ից, երբ անցկացվեց 3 վարժական հավաք:

Վարժական հավաքներն ավելի հաճախակի սկսեցին կազմակերպվել 2022 թ-ից: Մասնավորապես, 2022 թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից հայտարարվեցին վեց վարժական հավաքներ:

2022 թ. հոկտեմբերի 13-ին՝ ՀՀ կառավարության նիստի ժամանակ, ՀՀ Պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ եռամսյա վարժական հավաքների իրականացման փոխարեն այսուհետ կիրականացնեն 25-օրյա վարժական հավաքներ, որը պարտադիր կլինի Հայաստանի Հանրապետության բոլոր զինապարտ քաղաքացիների համար: ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը մանրամասնեց, որ հիմնական ծառայությունը 21 օր է՝ 7 օր պատրաստություն, 14 օր՝ մարտական հերթապահություն, և ևս 4 օր՝ կազմակերպական գործողությունների համար նախատեսված աշխատանքների իրականացման համար:

2023 թ. ընթացքում արդեն իսկ 4 անգամ հայտարարվել են վարժական հավաքներ, ընդ որում նշված հավաքները հայտարարվում են յուրաքանչյուրը երկու ամիս ժամկետով, որի շրջանակներում պահեստագործում հաշվառված քաղաքացիները կանչվում են վարժական հավաքների 25 օր ժամկետով:

***Ամփոփելով վերը նշված տեղեկությունները՝ փաստենք, որ զինծառայողների խորացված եւ հսկիչ կամ կանխարգելիչ բուժզննությունը պատշաճ կազմակերպումը մնում է արդիական:***

***Ավտոմոբիլի հետևանքով մահվան դեպքեր***

2023 թ. առաջին կիսամյակում ավտովթարի հետևանքով գրանցված մահվան դեպքերը (9) ևս գերազանցում են 2022 թ նույն ժամանակահատվածում մահվան դեպքերի թվին (7):

2023 թ.-ի 9 մահվան դեպքերից միայն 2-ն են ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից դասակարգվել որպես զինվորական ծառայության հետ կախված: Մահացած երկու պայմանագրային զինծառայողները ձևափոխի պատճառով մեքենայով գլորվել են ձորը:

Զինվորական ծառայության հետ չկապված դասակարգված 7 դեպքերից 5-ում պայմանագրային զինծառայողները վթարի են ենթարկվել սեփական մեքենայով, և 2 պայմանագրային զինծառայող հանդիսացել են ուղևոր այլ անձի վարած մեքենայում:

2022 թ. առաջին կիսամյակում ավտովթարի հետևանքով մահացած 7 զինծառայողների մահվան դեպքերը ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից համարվել են ծառայության հետ չկապված: Միջադեպերի արդյունքում մահացել են 4 պայմանագրային զինծառայող, 2 սպա, 1 ենթասպա: 7-ից 5-ի դեպքում զինծառայողները հանդիսացել են ուղևոր այլ անձի վարած մեքենայում, 2 դեպքում զինծառայողները վթարի են ենթարկվել սեփական մեքենայով:

***Տարիներ շարունակ տրանսպորտային միջոցներ վարելու կանոնների խախտման նմանատիպ դեպքերը շարունակում են մտահոգիչ մնալ նաև այսօր, քանի որ դրանց հետևանքով յուրաքանչյուր տարի միջինում մահանում են 15-20 զինծառայողներ:***

### ***Ղժբախտ պատահարի հետևանքով մահվան դեպքեր***

2023 թ. առաջին կիսամյակում ղժբախտ պատահարի հետևանքով մահացած 2 պայմանագրային զինծառայողներից մեկի մահվան պատճառ է հանդիսացել մեքենայի պայթյունը, մյուս պայմանագրային զինծառայողը մահացել է իր ավտոտնակում պրոպանի գազաբալոնի պայթյունի հետևանքով:

2022 թ առաջին կիսամյակում ղժբախտ պատահարի՝ հոսանքահարման հետևանքով մահացել է 1 սպա:

Եվ 2022, և 2023 թթ. մահվան դեպքերը համարվել են զինվորական ծառայության հետ չկապված:

**2023 թ. առաջին կիսամյակում զինծառայողների մահվան դեպքերն ըստ ամիսների**

2023 թ. առաջին կիսամյակում մահվան դեպքերի մեծ մասը տեղի է ունեցել

- **հունվարին` 18** դեպք, որից 15-ը զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտման հետևանքով, 1-ը` ավտովթարի, 1-ը` դժբախտ պատահարի 1-ը` առողջական խնդիրների,
- **փետրվարին** արձանագրված **5** մահվան դեպքից 3-ը ավտովթարի հետևանքով է, 1-ը` ինքնասպանության, 1-ը` առողջական խնդիրների,
- **մարտին** արձանագրված **6** մահվան դեպքերից 2-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է, 2-ը` ինքնասպանության հասցնելու, 1-ը` առողջական խնդիրների, 1-ը` ավտովթարի,
- **ապրիլին** արձանագրված **9** մահվան դեպքերից 5-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է, 2-ը` առողջական խնդիրների, 1-ը` ինքնասպանության, 1-ը` ավտովթարի,
- **մայիսին** արձանագրված **5** մահվան դեպքից 2-ը` առողջական խնդիրների հետևանքով է, 2-ը` հրադադարի ռեժիմի խախտման, 1-ը` դժբախտ պատահարի,
- **հունիսին** արձանագրված **9** մահվան դեպքից 4-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է, 3-ը` ավտովթարի, 1-ը` ինքնասպանության, 1-ը` առողջական խնդիրների:

*Հունվար ամսին մահվան դեպքերի մեծ թիվը պայմանավորված է այն համգամանքով, որ դրանցից 15-ը մեկ միջադեպի` Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված ՀՀ ՊՆ զորամասերից մեկի անձնակազմի համար նախատեսված կացարանում բռնկված հրդեհի հետևանք է:*

*Մահվան մեծ թվով դեպքեր արձանագրվել են նաև 2023 թ. ապրիլ և հունիս ամիսներին` 9-ական դեպք յուրաքանչյուր ամսվա ընթացքում: Նշված ամիսներին մահվան դեպքերի մեծ թիվը պայմանավորված է հայ-ադրբեջանական և արցախաադրբեջանական սահմանային իրավիճակի սրման հետ: Ապրիլին գրանցված 9 դեպքերից 5-ը և հունիսին` 4-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է:*

*Մարտին արձանագրված 6-ից 2-ական մահվան դեպքերը հրադադարի ռեժիմի խախտման և ինքնասպանության հետևանքով են, իսկ 1-ական դեպք՝ առողջական խնդիրների և ավտովթարի հետևանքով:*

*Ամփոփելով վերագրյալը կարող ենք արձանագրել, որ 2023 թ առաջին կիսամյակում բացի հունվար և փետրվար ամիսներից մյուս բոլոր ամիսներին արձանագրվել են հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերը, որոնք պայմանավորված են հայ-ադրբեջանական սահմանագծի երկայնքով Ադրբեջանի շարունակվող ագրեսիվ գործողություններով, այդ թվում՝ Լաչինի միջանցքի ամբողջական փակման ուղղությամբ գործողություններով:*

*Փաստացի, ավտովթարի հետևանքով մահվան դեպքեր արձանագրվել են բոլոր ամիսներին բացի մայիսից, ինքնասպանություն որակված մահվան դեպքեր արձանագրվել են փետրվար, մարտ, ապրիլ և հունիս ամիսներին, առողջական խնդիրների հետևանքով զինձառայողների մահացության դեպքեր արձանագրվել են 2023 թ. առաջին կիսամյակի բոլոր ամիսների ընթացքում:*

*Ինչպես 2022 թ առաջին կիսամյակում, 2023 թ-ին ևս մահվացության պատճառների մեջ գերակշռում են հրադադարի ռեժիմի խախտման, ավտովթարի, ինքնասպանության և առողջական խնդիրների հետևանքով դեպքերը: Կարող ենք պնդել, որ զինված ուժերում զինձառայողների անվտանգության, առողջության պահպանման և ոչ կանոնադրային հարաբերությունների նվազեցման ուղղությամբ կատրաված ջանքերն անհրաժեշտ արդյունքներ չեն տալիս:*

### *Մահվան դեպքերի մասին տարածված հաղորդագրությունները*

2023 թ. առաջին կիսամյակում մահացած 52 զինձառայողներից միայն 32-ի մահվան մասին է տարածվել պաշտոնական հաղորդագրություն, 1 դեպքի մասին տեղեկություն է տարածվել միայն զանգվածային լրատվամիջոցներով: Մյուս 19՝ դեպքերի մասին պաշտոնական տեղեկություն ընդհանրապես չի տարածվել:

Նկատենք, որ նույնիսկ այն դեպքերում, երբ զինծառայողի մահվան փաստը դատախազության կողմից համարվել է զինվորական ծառայության հետ կապված, միննույն է այդ մասին պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել, օրինակ՝ առողջական խնդիրների հետևանքով 4 մահվան դեպքի վերաբերյալ:

*Ի դեպ, որպես կանոն, առողջական խնդիրների (հիվանդության) և ավտովթարի հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվում:*

**Զինծառայողների մահվան դեպքերի պատճառներն ըստ զինծառայության տեսակի կամ զինծառայողի կարգավիճակի**

Դիտարկելով 2023 թվականի առաջին կիսամյակում զինված ուժերում մահվան դեպքերն ըստ պատճառների և մահացած զինծառայողների ծառայության տեսակի՝ արձանագրում ենք, որ.

**Ժամկետային զինծառայողների շրջանում մահացության պատճառներն են**

- հրադադարի ռեժիմի խախտումը (5 դեպք),
- ինքնասպանությունը (4 դեպք),
- զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտումը (15 դեպք):

**պայմանագրային զինծառայողների մահացության պատճառներն են**

- ավտովթարը (4 դեպք),
- առողջական խնդիրները (3 դեպք),
- հրադադարի ռեժիմի խախտումը (3 դեպք),
- դժբախտ պատահարը (2 դեպք)
- ինքնասպանությունը (1 դեպք):

**սպանների մահվան պատճառներն են**

- առողջական խնդիրները (4 դեպք),
- ավտովթարը (4 դեպք),
- հրադադարի ռեժիմի խախտումը (3 դեպք):

**ենթասպանների մահվան պատճառներն են**

- ավտովթարը (1 դեպք),



- առողջական խնդիրները (1 դեպք):

պահեստագորայինների մահվան պատճառն է

- հրադադարի ռեժիմի խախտումը (2 դեպք):

Այսպիսով, 2023 թ-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են թե՛ ժամկետային, թե՛ պայմանագրային զինծառայողների, թե՛ սպաների և թե՛ պահեստագորայինների շրջանում, առողջական խնդիրների հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են պայմանագրային զինծառայողների, սպաների ու ենթասպաների շրջանում, ավտովթարի հետևանքով՝ պայմանագրային զինծառայողների, սպաների և ենթասպաների շրջանում, դժբախտ պատահարի հետևանքով՝ միայն պայմանագրային զինծառայողների շրջանում, իսկ ինքնասպանության հետևանքով մահվան դեպքեր՝ միայն ժամկետային և պայմանագրային զինծառայողների շրջանում:

2022 թվականի առաջին կիսամյակում զինված ուժերում մահվան դեպքերն ըստ պատճառների և մահացած զինծառայողների ծառայության տեսակի՝ ժամկետային զինծառայողների շրջանում մահացության պատճառներն են

- հրադադարի ռեժիմի խախտում (5 դեպք),
- ինքնասպանություն (3 դեպք),
- սպանություն (1 դեպք):

պայմանագրային զինծառայողների մահացության պատճառներն են

- ավտովթար (4 դեպք),
- առողջական խնդիրներ (4 դեպք),
- հրադադարի ռեժիմի խախտում (3 դեպք),
- սպանություն (1 դեպք):

սպաների մահվան պատճառներն են

- առողջական խնդիրներ (3 դեպք),
- ավտովթար (2 դեպք),
- հրադադարի ռեժիմի խախտում (1 դեպք),
- դժբախտ պատահար (1 դեպք):

## 1 Էնթասապայի մահվան պատճառն է

- **ավտովթարը:**

## 1 պահեստագորային զինճառայողի մահվան պատճառն է

- **ինքնասպանությունը:**

2022 թվականի համեմատ 2023 թվականին զինված ուժերում ժամկետային զինճառայողների մահվան թիվն ավելի քան կրկնապատկվել է ((համապատասխանաբար՝ 9 և 24 ժամկետային զինճառայող), 2023 թվականին ժամկետայինների շրջանում մահվան դեպքերի նման ցուցանիշը պայմանավորված է հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում բռնկված հրդեհով, երբ մեկ միջադեպի արդյունքում 15 ժամկետային մահացավ: 2022 թվականի համեմատ 2023 թվականին նվազել են հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով ժամկետային զինճառայողների մահվան դեպքերը (2022 թ.՝ 5 դեպք, 2023 թ.՝ 3):

Սպաների շրջանում 2022 թվականին գրանցվել է հրադադարի խախտման հետևանքով մահվան 1, իսկ 2023 թվականին 3 դեպք: 2023 թվականի ապրիլի 11-ին Սյունիքի մարզի Տեղ համայնքի տարածքում աղբբեջանցիները կրակ էին բացել հարևանությամբ ինժեներական աշխատանքներ կատարող հայ զինճառայողների ուղղությամբ, ինչ արդյունքում էլ զոհվել էր 4 սպա:


Սույն տեղեկանքում անդրադարձել ենք վարժական հավաքների կազմակերպման և անցկացման փուլում ՀՀ պաշտպանության նախարարության և համապատասխան ստորաբաժանումների կողմից պահեստագորայինների առողջական վիճակի համալիր գննության, զինվորական ծառայությանն ընդգրկվելու համար պատշաճ կարողությունների ուսուցման, պատրաստվածության, զինճառայողների անվտանգության պահպանմանն ուղղված միջոցների պատշաճ կատարման կարևորությանը: Ի տարբերություն նախորդ տարվա առաջին կիսամյակի, երբ արձանագրվել էր պահեստագորում հաշվառված 1 անձի ինքնասպանության դեպք, 2023 թ. նույն ժամանակահատվածում գրանցվել է պահեստագորայինների մահվան 2 դեպք: Երկու դեպքում էլ պահեստագորայինները մահացել են հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով:

2022 թվականին գրանցվել է սպանության 2 դեպք, 2023-ին սպանության դեպք զինված ուժերում չի գրանցվել:

Ինչ վերաբերում է պայմանագրային զինծառայողների մահվան դեպքերին, ապա 2023 թ. առաջին կիսամյակում նրանց թիվը կազմում է 13, 2022 թվականին՝ 12:


*Ամփոփելով, արձանագրում ենք, որ 2023 թ. առաջին կիսամյակում մահվան դեպքերի արդյունքում մահացել են առավել մեծ թվով ժամկետային զինծառայողներ՝ 24 դեպք, որոնց մեծամասնության մահվան պատճառը կացարանում բռնկված հրդեհն է, 2022 թ. նույն ժամանակահատվածում առավել մեծ թվով մահվան դեպքերի արդյունքում մահացել են պայմանագրային զինծառայողներ՝ 12 դեպք, որոնցից մեծ մասի՝ 4-ական դեպքերի պատճառներն են ավտովթարը և առողջական խնդիրները: Իսկ 2022 թ. առաջին կիսամյակում ժամկետային զինծառայողների մահվան դեպքերի թիվը կազմել է 9, որից 4-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով: (տե՛ս գծապատկեր 3):*

Գծապատկեր 3. 2023 թ. առաջին կիսամյակում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների ծառայության տեսակն ըստ մահվան պատճառների



Ինչ վերաբերում է մահացության դեպքերի աշխարհագրական տեղաբաշխմանը, ապա նշենք, որ մահվան 52 դեպքերից 42-ը տեղի է ունեցել ՀՀ տարածքում, 10-ը՝ ԱՀ/ԼՂ տարածքում (տե՛ս գծապատկեր 4):

**Գծապատկեր 4. 2023 թ. առաջին կիսամյակում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների թիվն ըստ մահվան դեպքերի տարածքների**



***Զինվորական ծառայության հետ կապված և չկապված դասակարգված մահացության դեպքեր***

2022 թվականի առաջին կիսամյակում մահվան 30 դեպքերից 6-ը տեղի է ունեցել ԱՀ/ԼՂ զինված ուժերում, 2023 թվականին ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության թիվն աճել է 66 %-ով (10 դեպք)

**ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության** կողմից Կազմակերպությանը տրամադրվել է 52 զինծառայողի մահվան դեպքի մասին տեղեկություն, որոնցից 37-ը համարվել է զինվորական ծառայության հետ կապված, 15-ը՝ չկապված:

Ի դեպ, Կազմակերպությանը այլ պաշտոնական աղբյուրից հայտնի է դարձել ինքնասպանություն գործած ԱԱԾ սահմանապահ զորքերի մեկ ժամկետային զինծառայողի մահվան մասին, որի վերաբերյալ չի տեղեկացվել դատախազության կողմից:

Նշենք, որ դատախազության կողմից ծառայության հետ չկապված դասակարգված մահացության 15 դեպքերից

- 7-ի պատճառն ավտովթարն է,
- 4-ի պատճառը՝ առողջական խնդիրները,
- 2-ի պատճառը՝ դժբախտ պատահարը,
- 2-ի պատճառը՝ ինքնասպանությունը:

**ՀՀ քննչական կոմիտեի (ՔԿ) կողմից Կազմակերպությանը տրամադրվել են միայն այն 36 զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները, որոնց կապակցությամբ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում իրականացվում է մինչդատական քրեական վարույթ:**

ՀՀ ՔԿ կողմից Կազմակերպությանը տրամադրված տվյալների համաձայն 36 զինծառայողների մահվան դեպքերը համարվել են զինվորական ծառայության հետ կապված:

*Նկատենք, որ ՀՀ քննչական կոմիտեի կողմից Կազմակերպությանը չեն տրամադրել զինծառայողների անունների, ծառայության տեսակի, դեպքերի տարածաշրջանի վերաբերյալ տվյալներ:* Նմանատիպ պատասխան ստացվել էր նաև 2022 թվականին Կազմակերպության կողմից ՀՀ քննչական կոմիտե ուղարկված հարցմանն ի պատասխան:

*Ի դեպ, 2021 թվականի հուլիս ամսից հետո Կազմակերպության կողմից ՀՀ ՔԿ ուղարկված գրություններին ի պատասխան տրամադրվում է միայն հայցվող տեղեկությունների մի մասը:*

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրել է միայն 2023 թ. ապրիլ-հունիս ժամանակահատվածում մահացած զինծառայողների թիվն ըստ ծառայության տեսակի և մահվան դեպքի ամիսների: Զինծառայողների անունների, մահվան պատճառների վերաբերյալ տվյալների տրամադրումը ՀՀ ՊՆ կողմից մերժվել է՝ համարելով դրանք գաղտնի՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների:

Ըստ ՀՀ ՊՆ տվյալների՝ 2023 թ. ապրիլ-հունիս ամիսներին մահացել է 14 զինծառայող, որոնցից 4-ը՝ ժամկետային, 10-ը՝ պայմանագրային զինծառայողներ են:

*Փաստացի, 2020 թվականի հուլիսից հետո մինչ այժմ ՀՀ ՊՆ կողմից կրկին դադարեցվել է մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունների ամբողջական*

*տրամադրումը Կազմակերպությանը, ինչն անհասականալի է, քանի որ նմանատիպ բովանդակությամբ տեղեկությունը մի ժամանակահատվածի դեպքում տրամադրվում է մյուսի դեպքում՝ ոչ:*

ՀՀ պաշտպանության նախարարությունը շարունակում է ոչ միատեսակ վարքագիծ դրսևորել մահվան վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում: Դիտարկենք վերջին 10 տարիներին ՀՀ ՊՆ վարքագիծը՝ մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հարցումներին պատասխանելիս:

Այսպես, 2013 թ-ին զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ Կազմակերպությունը պահանջել է միայն զինծառայողների անունները, որոնք տրամադրվել են:

2014 թ. Կազմակերպության կողմից պահանջվել է տրամադրել մահացած զինծառայողների անունները, ծառայության տեսակը, մահվան պատճառները և մահվան փաստերով հարուցված քրեական գործերի վերաբերյալ տվյալներ: ՀՀ ՊՆ կողմից տրամադրվել է միայն թվային տվյալ՝ ըստ մահացության պատճառների:

2015 և 2016 թթ. նույնաբովանդակ հարցմանն ի պատասխան՝ ՊՆ կողմից տեղեկատվության տրամադրումը մերժվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների հիման վրա ՀՀ ՊՆ 09.07.2015 թ. N 9-Ն հրամանով հաստատված «ՀՀ պաշտպանության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» 42-րդ և 43-րդ հոդվածների համաձայն՝ համարելով այն պետական և ծառայողական գաղտնիք:

2017 թ. ՀՀ ՊՆ-ից հարցում է կատարվել է միայն նշված տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին մահացած և Կազմակերպությանը զանգվածային լրատվամիջոցներից և պաշտոնական հաղորդագրություններից հայտնի դարձած որոշ (ըստ անունների) զինծառայողների մահվան դեպքերի փաստերով հարուցված քրեական գործերի ընթացքի մասին, ինչին ի պատասխան՝ ՀՀ ՊՆ կողմից տեղեկացվել է, որ անհրաժեշտ է դիմել ՀՀ ՔԿ կամ ՀՀ զինվորական դատախազություն:

2018 և 2019 թվականներին ՀՀ ՊՆ կողմից տեղեկությունը տրամադրվել է ըստ զինծառայողների անունների, սակայն չի տրամադրվել տեղեկություն զինծառայողների մահացության պատճառների մասին:

2020 թ-ի առաջին կիսամյակում զինձառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկությունը ՀՀ ՊՆ կողմից տրամադրվել է ըստ անունների, սակայն 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով մահացության դեպքերի վերաբերյալ տվյալները համարվել են գաղտնի՝ հղում կատարելով «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ կետին՝ «...Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը...»: 2020 թ. երկրորդ կիսամյակում և 2021 թ. առաջին կիսամյակում մահացության բոլոր (ոչ միայն պատերազմական գործողությունների հետևանքով) դեպքերի վերաբերյալ տվյալների տրամադրումը մերժվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և ՀՀ ՊՆ 2015 թ. հուլիսի 9-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 55-րդ կետերի պահանջների համաձայն:

2021 թ-ի երկրորդ կիսամյակից սկսած մինչև 2022 թվականն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ կողմից Կազմակերպության հարցումներին ի պատասխան տրամադրվել է միայն մահացած զինձառայողների թվի և զինձառայության հետ կապված և չկապված դասակարգված դեպքերի թվի վերաբերյալ տվյալներ:

**Ցվանեի<sup>2</sup> 20-րդ սկզբունքով սահմանվում է, որ «տեղեկատվության հարցումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում պետական մարմինը պետք է հարցումներին պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետում գրավոր ներկայացնի մերժման հստակ պատճառները», սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը չի պահպանում նշված սկզբունքը զինձառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները տրամադրելիս:**

---

<sup>2</sup> <https://drive.google.com/file/d/1yz7OryKc3KTszbYmRUzM9CG6lezoel8U/view?pli=1>



**2023 թ. առաջին կիսամյակում զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերի բաշխումն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների**

Ըստ Կազմակերպությանը հայտնի դարձած պաշտոնական և զանգվածային լրատվամիջոցներով տարածված տվյալների՝ 2023 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 52 զինծառայողները մահացել են 30 միջադեպի արդյունքում, որոնցից

21-ով (42 զինծառայողի մահվան փաստով) կայացվել է որոշում քրեական հետապնդում հարուցելու մասին մասին հետևյալ հոդվածներով.

- 5-ը՝ (11 զինծառայողի մահվան դեպք) ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերով՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,
- 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզուգույնությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում: Դեպքերից մեկի վարույթը հետազայում կարճվել է քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:
- 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342 հոդվածի 2-րդ մասով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որն անզուգույնությամբ առաջացրել է մարդու մահ,

- **1-ը՝ (15 զինծառայողի մահվան դեպք)** ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Ջենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետերով՝ այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, ինչպես նաև 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով՝ ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 8-րդ և 15-րդ կետերով՝ մի խումբ անձանց կողմից, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

- 1-ը՝ (2 զինծառայողի մահվան դեպք) ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով՝ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ,
- 1-ը՝ 542-րդ հոդվածի 3-րդ մասով՝ պահակախմբի կամ պարեկախմբի կազմի մեջ մտնող անձի կողմից պահակային կամ կայագորային ծառայության կանոնագրքային կանոն խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ անզգուշությամբ հանգեցրել է պահպանվող օբյեկտի ոչնչացման կամ վնասման, պահպանվող օբյեկտից հափշտակության կամ այլ ծանր հետևանքի,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ զինծառայողի նկատմամբ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մասով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը (մահվան դեպքը առողջական խնդրի հետևանքով է),
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 519-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 524-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից, մի խումբ անձանց կողմից զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն

գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ, ստորադասի (ենթակայի) կողմից հրամանատարի (պետի) նկատմամբ գորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը մեկ այլ զինծառայողի կողմից,

- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ գորամասում մեկ այլ զինծառայողի կողմից մի խումբ անձանց կողմից զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 520-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին (Ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը) և 524 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (Զինծառայողին վիրավորանք հասցնելը)
- 1-ը՝ ԱՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին ուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:

Նշված 20 միջադեպերի արդյունքում մահացած 41 զինծառայողներից 40-ի մահվան փաստով հարուցված քրեական վարույթն ընթացքի մեջ է, 1 դեպքում քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդված, 1-ին մասի 1-ին կետով (*«Հաստատվել է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը»*):

Մյուս 9 միջադեպերի արդյունքում մահացած 10 զինծառայողների մահվան դեպքերով վարույթներն իրականացվել են տարբեր այլ՝ ոչ զինվորական քննչական վարչությունների և ոստիկանության տարբեր բաժինների կողմից, և հայտնի չէ, թե ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածներով են հարուցվել քրեական գործեր կամ հարուցվել են

արդյոք, թե՛ ոչ: Ի դեպ, նշված 9 միջադեպերը դատախազության կողմից համարվել են զինվորական ծառայության հետ չկապված:

Հավելված 1-ում ներկայացվում է 2023 թ-ի առաջին կիսամյակում զինված ուժերում մահացության դեպքերի ամփոփ տեղեկատվությունը.

**Հավելված 1. 2023 թ-ի առաջին կիսամյակում զինված ուժերում մահացության դեպքերի ամփոփ տեղեկատվություն**

Հ/Հ	Անուն ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածաշրջան	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող/ նյութեր նախապատրաստող մարմինը	ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1.	Նվեր Ասրյան	01.01.2023	ԱՀ	ՋԼՄ	ԱՀ ՔԿ Մարտակերտի քննչական բաժին	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար	Հայտնի չէ
2.	Ռուբեն Կարապետյան	16.01.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մաս	Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անգործությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:	Առողջական	Քրեական վարույթ
3.	Արամ Մանուկյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկական կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անգործությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անգործությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
4.	Վոլոդյա Ներսիսյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկական կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/	Քրեական վարույթ

							վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	այրվածք հրդեհի հետրանքով	
5.	Գոռ Մարտիրոսյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Չէնքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Չէնքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
6.	Ռոստոմ Ասրյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Չէնքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Չէնքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
7.	Մուշեղ Համբարյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Չէնքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Չէնքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ

8.	Տարոն Ղարիբյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
9.	Պավլիկ Աբազյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
10.	Դավիթ Սարգսյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
11.	Հրայա Գրիգորյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ



							կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ		
12.	Նարեկ Ավագյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՁՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
13.	Գագիկ Բարսեղյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՁՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
14.	Միշա Դումիկյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՁՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
15.	Հայկ Կիրակոսյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՁՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ձենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել	Ձենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/	Քրեական վարույթ

							վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	այրվածք հրդեհի հետրանքով	
16.	Սերգեյ Գևորգով	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ջենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ջենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
17.	Համլետ Դավթյան	19.01.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մաս	Ջենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացնում է 2 կամ ավելի անձանց մահ	Ջենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով	Քրեական վարույթ
18.	Ալիկ Մովսեսյան	26.01.2023	ԱՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	ԱՀ ՔԿ ՏՔՎ Մարտակերտի քննչական բաժին	Հայտնի չէ	Հայտնի չէ	Դժբախտ պատահար	Հայտնի չէ
19.	Հայկ Պետրոսյան	19.02.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ՋՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2րդ մասի 1ին, 2րդ, 3րդ կետերով, 520-րդ հոդվածի 3րդ մասի 1ին և 524 հոդվածի 2րդ մասի 2րդ և 3րդ	Ձորամատում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով	Ինքնասպանություն	Քրեական վարույթ

						կետերով	անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից		
20.	Զորանդ Արզումանյան	19.02.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ԶՔԳ	Քրեական օրենսգրքի 538- րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:	մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	Ավտովթար/ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	Քրեական վարույթ
21.	Զորակ Երանոսյան	19.02.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ԶՔԳ	Քրեական օրենսգրքի 538- րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:	մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	Ավտովթար/մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ	Քրեական վարույթ
22.	Էմիլ Զավադյան	22.02.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
23.	Հայկազ Առաքելյան	28.02.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժանմունք	ՀՀ քրեական օրենսգրքի 342 հոդվածի 2-րդ մաս	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթնեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթնեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	ավտովթար	Քրեական վարույթ

24.	Խաչիկ Հակոբյան	07.03.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 550- րդ հոդվածի 3- րդ մաս	Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:	Առողջական	Քրեական վարույթ
25.	Անդրանիկ Օհանյան	08.03.2023	ՀՀ	Պաշտոնական	ՀՀ ՔԿ ԶՔԳ	ՀՀ քրեական օրենսգրքի 522- րդ հոդվածի 2րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի, 519-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 524-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից, Մի խումբ անձանց կողմից գորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ,	Ինքնասպանություն	Քրեական վարույթ

							ստորադասի (ենթակայի) կողմից հրամանատարի (պետի) նկատմամբ գործանասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը մեկ այլ զինծառայողի կողմից		
26.	Արտուշ Գևորգյան	11.03.2023	ՀՀ	ԶԼՄ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մաս	Ջորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից	Ինքնասպանություն	Քրեական վարույթ
27.	Արշակ Սարգսյան	22.03.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ

							հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով		
28.	Հրաչյա Սարուխանյան	31.03.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր	Մպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ
29.	Ռոբիկ Հարությունյան	06.04.2023	ԱՀ	Պաշտոնական	ԱՀ ՔԿ Մարտունու քննչական բաժին	ԱՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մաս	Մպանությունը, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին ուղղակի դիտավորությամբ կամ անզուգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Հայտնի չէ
30.	Հովհաննես Ալեքսանյան	21.03.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 542-	Պահակախմբի կամ պարեկախմբի կազմի մեջ	Ավտովթար	Քրեական վարույթ

						րդ հոդվածի 3-րդ մաս	մտնող անձի կողմից պահակային կամ կայազորային ծառայության կանոնադրային կանոն խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ անզգուշությամբ հանգեցրել է պահպանվող օբյեկտի ոչնչացման կամ վնասման, պահպանվող օբյեկտից հափշտակության կամ այլ ծանր հետևանքի		
31.	Կարեն Հակոբյան	14.04.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Արարատի մարզային քննչական վարչություն	Հայտնի չէ	Հայտնի չէ	ավտովթար	Հայտնի չէ
32.	Արթուր Սահակյան	11.04.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ

33.	Մկրտիչ Հարությունյան	11.04.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155- րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15- րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ
34.	Հենրիկ Քոչարյան	11.04.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155- րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15- րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ



							ատելություն, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով		
35.	Նարեկ Սարգսյան	11.04.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155- րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15- րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ
36.	Արտյոմ Պողոսյան	23.04.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155- րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15- րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ

							անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով		
37.	Վարուժան Բրուտյան	25.04.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից գրկելը	Առողջական	Քրեական վարույթ
38.	Սերգեյ Հայրապետյան	18.04.2023	ԱՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Վարույթն ավարտված է
39.	Անդրանիկ Շեկոյան	05.05.2023	ԱՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Վարույթն ավարտված է
40.	Արկադի Ավանեսյան	11.05.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ կետ	Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:	Առողջական	Կարճվել է, քրեական օրենսգրքի 13-րդ հոդված, 1-ին մասի 1-ին կետ:

41.	Նարեկ Բաղդասարյան	12.05.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 8-րդ և 15-րդ կետեր	մի խումբ անձանց կողմից, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ
42.	Էդգար Սուլեյմանյան	17.05.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետեր, 264-րդ հոդվածի 2րդ մասի 3-րդ և 4-րդ կետեր	Այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ

							այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,		
43.	Արթուր Գալստյան	27.05.2023	ԱՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	ԱՀ ՔԿ Ստեփանակերտի վարույթ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Դժբախտ պատահար	Հայտնի չէ
44.	Լևոն Սարգսյան	06.06.2023	ՀՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ	Զինծառայողի նկատմամբ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզուգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Քրեական վարույթ

45.	Նորայր Մաթևոսյան	07.06.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	ՀՀ ՔԿ Չարենցավանի քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մաս	Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անգգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս	Ավտովթար	Քրեական վարույթ
46.	Վարուժան Բաբայան	12.06.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	ՀՀ Սյունիքի քննչական վարչություն	Հայտնի չէ	Հայտնի չէ	ավտովթար	Հայտնի չէ
47.	Հարություն Գասպարյան	12.06.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	ՀՀ Սյունիքի քննչական վարչություն	Հայտնի չէ	Հայտնի չէ	ավտովթար	Հայտնի չէ
48.	Արա Վանեսյան	20.06.2023	ՀՀ	ՀՀ գլխավոր դատախազություն	ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժին	Հայտնի չէ	Հայտնի չէ	առողջական	Հայտնի չէ
49.	Արմեն Աբգարյան	28.06.2023	ԱՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ

							անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով		
50.	Սամվել Թորոսյան	28.06.2023	ԱՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր	Մպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ
51.	Երվանդ Թադևոսյան	28.06.2023	ԱՀ	Պաշտոնական	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր	Մպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային,	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ

							Էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով		
52.	Գագիկ Բալայան	28.06.2023	Ա.Հ			ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր	Սպանությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ/ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով	հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական վարույթ

## *Հավելված 2*

### *2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿՈՒՄ ՀՀ ԵՎ ԱՀ/ԼՂ ՁԻՆՎԱԾ ՈՒՇԵՐՈՒՄ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

#### **Ա. Հրադադարի ռեժիմի խախտում**

##### **1. Արշակ Սարգսյան**

2023 թվականի մարտի 22-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը տարածեց տեղեղեկատվություն, համաձայն որի՝ Երասխի հատվածում տեղակայված մարտական դիրքի ուղղությամբ հակառակորդի կրակոցից զոհվել է պարտադիր ժամկետային զինծառայող Արշակ Սարգսյանը:

Ձինծառայողի մահվան փաստով ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

##### **2. Հրաչյա Սարուխանյան**

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2023թ. մարտի 31-ին ժամը 21:50-ից 22:00-ն ընկած ժամանակահատվածի սահմաններում ՀՀ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքի տարածքում հրազենային վիրավորումներ են ստացել մեկ պայմանագրային և մեկ ժամկետային զինծառայող, որոնց հետևանքով ժամկետային զինծառայողը՝ Հրաչյա Սարուխանյանը, ստացած՝ կյանքի հետևանքազուրկ վնասվածքներից մահացել է:

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ իններորդ կայազորային քննչական բաժնում սպանության և սպանության փորձի հատկանիշներով նախաձեռնվել է երկու առանձին քրեական վարույթ, որոնք միացվել են մեկ վարույթում: Սկսված նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ նշված ժամանակահատվածում կրակոցներ են արձակվել ինչպես հակառակորդի կողմից, այնպես էլ միաժամանակ փոխհրաձգություն է տեղի ունեցել նաև ՀՀ ՁՈՒ զինծառայողների միջև: Նախաձեռնվել է



վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

3. Արթուր Սահակյան
4. Մկրտիչ Հարությունյան
5. Հենրիկ Քոչարյան
6. Նարեկ Սարգսյան

2023 թվականի ապրիլի 11-ին ադրբեջանական կողմը կրակ էր բացել Տեղ գյուղի հատվածում ինժեներական աշխատանք կատարող հայ զինծառայողների ուղղությամբ: Պաշտպանության նախարարությունից հայտնում են՝ հայկական կողմն ունի 4 զոհ և 6 վիրավոր:

Դեպքից մոտ երկու շաբաթ առաջ ադրբեջանական զինուժը խրամատավորվել էր Տեղ գյուղի դաշտերում, որի հարևանությամբ էլ հայկական կողմն էր ինժեներական աշխատանքներ իրականացնում: Հայկական իշխանություններն էլ զուգահեռ հայտնում էին տեղում բանակցությունների վարման մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

## 7. Արտյոմ Պողոսյան

Ըստ տարածված պաշտոնական հաղորդագրության՝ 2023 թվականի ապրիլի 23-ին ՀՀ ՊՆ N գորմասի պահպանության տակ գտնվող մարտական դիրքի ուղղությամբ հակառակորդի մարտական դիրքից արձակված հրազենային կրակոցից պարանոցի հատվածում վիրավորում է ստացել նշված գորմասի զինծառայող Արտյոմ Արսենի Պողոսյանը: Հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին զինծառայողը մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ՋՔԳՎ հինգերորդ կայագորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի հատկանիշներով:

#### **8. Նարեկ Բաղդասարյան**

2023 թ. մայիսի 11-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկատվություն տարածեց այն մասին, որ նույն օրը ժամը 06:00-ից, Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները հրետանային և ականանետային միջոցներից կրակ են բացել Սոթքի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: ՀՀ ՊՆ-ի կողմից տարածված մեկ այլ հաղորդագրությամբ պարզ դարցավ, որ մայիսի 12-ին ՀՀ ինքնիշխան տարածքը պաշտպանելիս զոհվել է ժամկետային զինծառայող Նարեկ Բաղդասարյանը: ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 8-րդ և 15-րդ կետերի հատկանիշներով հարուցված քրեական գտործի նախաքննությունը շարունակվում է:

#### **9. Էդգար Սուլեյմանյան**

2023 թ. մայիսի 17-ին Սոթքի ուղղությամբ հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման դեպքի հետևանքով զոհվել է ժամկետային զինծառայող Էդգար Սուլեյմանյանը, այս մասին հաղորդագրություն է տարածվել ՀՀ ՊՆ կողմից: ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետեր, 264-րդ հոդվածի 2րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում:

#### **10. Սամվել Թորոսյան**

#### **11. Երվանդ Թադևոսյան**

#### **12. Գագիկ Բալայան**

#### **13. Արմեն Աբգարյան**

Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունից հայտնել էին, որ հունիսի 28-ին՝ ժամը 01:30-ից, Ադրբեջանի ՋՌԻ ստորաբաժանումները հրետանային միջոցներից կրակ են բացել Մարտունու և Մարտակերտի հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաև ԱԹՄ-ներ: Հայկական կողմն ունի 4 զոհ՝ Արմո Աբգարյան, Սամվել Թորոսյան, Երվանդ Թադևոսյան, Գագիկ Բալայան: Արցախի ՊՆ-ից նաև հայտնել էին, որ հունիսի 28-ին ադրբեջանական կրակոցների հետևանքով վիրավորում ստացած զինծառայողներ չկան:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերով:

## **Բ. Ինքնասպանություն**

### **Զինվորական ծառայության հետ կապված դեպքեր**

#### **1. Հայկ Պետրոսյան**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023 թվականի փետրվարի 19-ին հաղորդագրություն էր տարածել այն մասին, որ ՀՀ ՊՆ N գործամասի պահպանության տեղամասում զինծառայող, շարքային Հայկ Արամի Պետրոսյանը ստացել է հրազենային մահացու վիրավորում: Ավելի ուշ տարածած հաղորդագրության համաձայն՝ պարզվել է, որ 2023թ. հունվար-փետրվար ամիսներին մարտական դիրքում 2 իրար հաջորդող հերթապահությունների ընթացքում պայմանագրային զինծառայող, դիրքի պատասխանատու Ն.Մ.-ն և դիրքի ավագի օգնական Հ.Ա.-ն առաջին անգամ մարտական հերթապահության ընդգրկված առանձին զինծառայողներին, այդ թվում նաև Հայկ Պետրոսյանին, ենթարկել են ծաղրուծանակի: Զինծառայողի մահվան դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 519-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 524-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

#### **2. Անդրանիկ Օհանյան**

ՊՆ հաղորդագրության մեջ ասվում է՝ 2023թ. մարտի 8-ին ՀՀ ՊՆ ՌՌ Բերդի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը զինավանդի հավաքակալանին հարակից անտառում հայտնաբերվել է ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Անդրանիկ Կարոյի Օհանյանի դին՝ ծառից կախված վիճակում:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության (ԶԲԳՎ) վեցերորդ կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը) նախաձեռնվել է քրեական վարույթ և կատարվում է նախաքննություն:

### **3. Արտուշ Գևորգյան**

2023 թ. մարտի 11-ին ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի N զորամասի սահմանապահ ուղեկալներից մեկի մշտական տեղակալման վայրում հայտնաբերվել էր նույն ուղեկալի սահմանապահ վերակարգում ծառայություն իրականացնող, պարտադիր ժամկետային զինծառայող Արտուշ Գևորգյանի դին՝ մահացու հրազենային վիրավորումով: Ավելի ուշ քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության համաձայն՝ պարզվել է, որ նույն զորամասի սահմանապահ ուղեկալի պարտադիր ժամկետային այլ զինծառայող ոչ կանոնակարգային հարաբերություններին բնորոշ դրսևորումներով Արտուշ Գևորգյանի անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ վերջինիս հասցրել է ինքնասպանության:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայագորային քննչական բաժնում նույն օրը, ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

### **Զինվորական ծառայության հետ չկապված**

### **4. Ռոբիկ Հարությունյան**

2023թ. ապրիլի 6-ին ԱՀ քննչական կոմիտեն տարածեց հաղորդագրություն, որ ԱՀ Մարտունու շրջանի Ճարտար քաղաքի վարչական տարածքի՝ «Մանյուն բաղ» կոչվող տեղամասում ծառից կախված վիճակում հայտնաբերվել է 2004թ. ծնված Ռոբիկ Հարությունյանի դին:

ԱՀ ՔԿ տարածքային քննչական վարչության Մարտունու շրջանի քննչական բաժնում ԱՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

## 5. Լևոն Սարգսյան

2023 թվականի հուլիսի 6-ին ժամը 22:40-ին շտապօգնության մեքենայով «ինքնավնասում պարանոցի շրջանում, կենսաբանական մահ» ախտորոշմամբ տնից Հերացու թիվ 1 հիվանդոցային համալիր է տեղափոխվել վերականգնողական արձակուրդում գտնվող Լևոն Սարգսյանը: Ըստ Կազմակերպությանը հայտնի տվյալների՝ մահվանից մոտավորապես մեկ ամիս առաջ՝ ապրիլի 29-ին, Լևոն Սարգսյանը ծանր վիճակում գորամասից տեղափոխվել էր ՀՀ ՊՆ ԿԿՁՀ հոսպիտալ: Բուժում ստանալուց հետո զինծառայողը վերադարձել էր տուն: ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

*Ներկայումս հայտնի չէ, թե ինչ պատճառներով է զինծառայողի ինքնազգացողությունը վատացել զինվորական ծառայության ընթացքում, սակայն այն հանգամանքը, որ բուժման մեջ և այս արձակուրդում գնտվելով դեպքից մեկ ամիս անց, զինծառայողը մահացել է իբր ինքնասպանության հետևանքով, առնվազն հիմք է տալիս կարծելու, որ զինվորական ծառայության ընթացքում զինծառայողը ակնհայտորեն ունեցել է խնդիրներ, որոնք պետք է պարզի օբյեկտիվ քննությունը:*

Գ. Ջենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում

Զինվորական ծառայության հետ կապված

1. Արամ Մանուկյան
2. Վոլոդիա Ներսիսյան
3. Գոռ Մարտիրոսյան
4. Ռոստոմ Ասրյան
5. Մուշեղ Համբարյան
6. Տարոն Ղարիբյան
7. Պավլիկ Աբազյան
8. Դավիթ Սարգսյան
9. Հրաչյա Գրիգորյան
10. Նարեկ Ավագյան
11. Գագիկ Բարսեղյան
12. Միշա Դումիկյան
13. Հայկ Կիրակոսյան
14. Սերգեյ Կևորկով
15. Համլետ Դավթյան

2023 թ. հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում բռնկված հրդեհի հետևանքով մահացած 15 ժամկետային զինծառայողներ: ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, նախաքննությունը շարունակվում է:

Դեպքից անմիջապես հետո պաշտոնից ազատվեցին 2-րդ բանակային կորպուսի հրամանատարը և 8 այլ բարձրաստիճան զինվորականներ, այդ թվում՝ 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալը, 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ թիկունքի և ԿՇԾ գծով թիկունքի պետը, 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի մարտական հերթապահության գծով տեղակալը, ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության հրդեհային անվտանգության ծառայության պետը, Բրիգադի շտաբի պետ-հրամանատարի տեղակալը, Բրիգադի հրամանատարի թիկունքի և ԿՇԾ գծով

տեղակալը, Բրիգադի ինժեներական ծառայության պետը, Բրիգադի ինժեներասակրավորային վաշտի հրամանատարը:

Զորամասի ինժեներական ծառայության սպաներից մեկի նկատմամբ հարուցվեց հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մասով (զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ):

## **Դ. Հիվանդություններ**

### **Զինվորական ծառայության հետ կապված**

#### **1. Ռուբեն Կարապետյան**

Սպա Ռուբեն Կարապետյանի մահվան դեպքի մասին որևէ տեղեկատվություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ ԶԼՄ-ներով: Դեպքի մասին հայտնել է ՀՀ գլխավոր դատախազությունը՝ Կազմակերպության հարցմանն ի պատասխան: «Փորոքների շողացում, սրտի իշեմիկ հիվանդություն» ախտորոշմամբ 2023 թ. հունվարի 16-ին Ռուբեն Կարապետյանը տեղափոխվել է ԳԿՀ, ձեռնարկված միջոցառումներն արդյունք չեն տվել ու զինծառայողը մահացել է:

ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, նախաքննությունը շարունակվում է:

#### **2. Խաչիկ Հակոբյան**

2023 թ. մարտի 6-ին ՊՆ-ի տարածած հաղորդագրության համաձայն մարտական դիրքերից մեկում մահացել է սպա, ԵԿՄ անդամ Խաչիկ Հակոբյանը: Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկության, մարտի 6-ին, ժամը 15:00-ի սահմաններում դիրքի կացարանից դուրս գալու ժամանակ Հակոբյանի ինքնազգացողությունը կտրուկ

վատացել է և կորցնելով հավասարակշռությունը վայր է ընկել կացարանի դիմաց: Նույն օրը ժամը 18:00-ի սահմաններում արձանագրվել է կենսաբանական մահ:

ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, նախաքննությունը շարունակվում է:

### **3. Վարուժան Բրուտյան**

Ջորամասում պայմանագրային զինձառայող Վարուժան Բրուտյանի ինքնազգացողությունը 2023 թ. ապրիլի 24-ին վատացել է, տեղափոխվել է ԼԿՀ, որտեղ «սուր ինֆարկտ` հարցականով, սուր կորանար հիվանդություն հարցականով» ախտորոշմամբ գրանցվել է կենսաբանական մահ: ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, նախաքննությունը շարունակվում է:

### **4. Արկադի Ավանեսյան**

2023 թվականի մայիսի 11-ին սպա Արկադի Ավանեսյանը մարտական հերթապահություն իրականացնելու ժամանակ հանկարծամահ է եղել: Դիակերճմամբ պարզվել է, որ մահվան պատճառը ինֆարկտն է: ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնած քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով` հաստատվել է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը:

### **Ծառայության հետ չկապված դեպքեր**

### **5. Էմիլ Ջավադյան**

Սպա Էմիլ Ջավադյանի ինքնազգացողությունը վատացել է 2023 թվականի փետրվարի 22-ին, իր տանը:

Վարույթն իրականացրել է ՀՀ Տավուշի մարզային քննչական վաչությունը:



Այլ մանրամասներ դեպքի մախսն հայտնի չեն:

## **6. Մերգեյ Հայրապետյան**

Պայմանագրային զինծառայող Մերգեյ Հայրապետյանը մահացել է 2023 թվականի ապրիլի 28-ին՝ իր տանը: Ստեփանակերտի հիվանդանոցում պարզվել է, որ մահվան պատճառը սրտի ինֆարկտն է: Վարույթն իրականացրել է ԱՀ ոստիկանության Ասկերանի ՇՈՒՐ-ը:

## **8. Անդրանիկ Շեկյան**

Ավագ ենթասպա Անդրանիկ Շեկյանը մահացած է հայտնաբերվել 2023 թվականի մայիսի 5-ին իր տանը: Վերջինս ունեցել է «զարկերակային հիպերտենզիա՝ հիպերտոնիկ կրիզ և քրոնիկ բրոնխիտ՝ ասթմա» հիվանդություն: Վարույթն իրականացրել է ԱՀ ոստիկանության Մարտակերտի շրջբաժինը:

## **9. Արա Վանեսյան**

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության Կազմակերպությանը տրամադրած տեղեկության՝ ազատ հերթափոխում գտնվող պայմանագրային զինծառայող Արա Վանեսյանը 2023 թ. հունիսի 20-ին Բերդ քաղաքի իր տանը հանկարծամահ է եղել: Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժինը:

## **Ե. Ավտովթարներ**

### **Զինվորական ծառայության հետ կապված**

#### **1. Զորանդ Արզումանյան**

#### **2. Զորակ Երանոսյան**

Ըստ Պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2023 թ. փետրվարի 19-ին՝ ժամը 19:40-ի սահմաններում, Խնածախ գյուղի մոտակայքում ձնահյուսի պատճառով ՊՆ «Ուսագ» մակնիշի ավտոմեքենան գլորվել էր ձորը, ինչի հետևանքով մահացել են սպաներ Զորանդ Արզումանյանը և Զորակ Երանոսյանը: Դեպքի

փաստով ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

## **Զինվորական ծառայության հետ չկապված ավտովթարներ**

### **3. Նվեր Ասրյան**

Ավագ ենթասպա Նվեր Ասրյանը 2023 թվականի հունվարի 1-ին ենթարկվել է ավտովթարի Վանք-Ստեփանակերտ ավտոճանապարհին, ինչի հետևանքով տեղում մահացել է: Մահվան ձաստով վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ Մարտակերտի քննչական բաժնի կողմից:

### **4. Հայկազ Առաքելյան**

2023 թվականի փոտրվարի 28-ին Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի Տեղ գյուղի վարչական տարածքում 150-200 մետր խորությամբ՝ ճանապարհին կից ձորում հայտնաբերվել է «Opel Zafira» մակնիշի ավտոմեքենա, որի մեջ մահացած գտնվել է 2 անձ՝ մեքենայի վարորդին և նրա ուղևոր՝ պայմանագրային զինծառայող Հայկազ Առաքելյանին: Ըստ նախնական տվյալների զինծառայողը գտնվել է այլ քաղաքացու կողմից վարած մեքենանայում: ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հատկանիշներով ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

### **5. Հովհաննես Առաքելյան**

Վերականգնողական արձակուրդում գտնվող սպա Հովհաննես Առաքելյանը 2023 թ. մարտի 21-ին Գյումրի քաղաքի Անկախության հրապարակի խաչմերուկում իր կողմից վարած «Opel Astra G» մակնիշի ավտոմեքենայով բախվել է մեկ այլ քաղաքացու վարած մեքենային ինչի հետևանքով սպան և նրա ուղևորը տեղում մահացել են: ՀՀ ՔԿ ՋՔԳՎ 10-րդ ԿՔԲ-ում ՀՀ քրեական օրենսգրքի 542-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, նախաքննությունը շարունակվում է:

## 6. Կարեն Հակոբյան

2023 թ. ապրիլի 14-ին սպա Կարեն Հակոբյանը իր վարած մեքենայով Երևան-Մեղրի ավտոճանապարհին բախվել է մեկ այլ ավտոմեքենայի, ինչի հետևանքով մահացել է: Վարույթն իրականացրել է Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժինը: Դեպքի մասին այլ մանրամասներ հայտնի չեն:

## 7. Նորայր Մաթևոսյան

2023 թ. հունիսի 7-ին Երևան-Սևան մայրուղու 30-րդ կմ հատվածում պայմանագրային զինճառայող Նորայր Մաթևոսյանը իր կողմից վարած ավտոմեքենայով դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց և գլորվել ձորը, ինչի հետևանքով տեղում մահացել է: ՀՀ ՔԿ Չարենցավանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

## 8. Վարուժան Բաբայան

## 9. Հարություն Գասպարյան

Պայմանագրային զինճառայողներ Հարություն Գասպարյանն ու Վարուժան Բաբայանը վերջինիս վարած ավտոմեքենայով 2023 թվականի հունիսի 12-ին ազատ հերթափոխում գտնվելով դուրս են եկել ճանապարհի երթևեկելի գոտուց և ընկել հարակից ձորը, ինչի հետևանքով Բաբայանը տեղում մահացել է, իսկ Գասպարյանը մահացել է նույն օրը Կապանի ԲԿ-ում: Դեպքի վերաբերյալ հաղորդումը Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնից ուղարկվել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային քննչական վարչություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը որոշելու համար:

*Կրկին արձանագրենք, որ ՀՀ զինված ուժերում ինչպես առողջական խնդիրների, այնպես էլ ավտովթարի հետևանքով մահացությունների վերաբերյալ պաշտոնական*

*տեղեկություններ չեն հրապարակվում, եթե դրանք որակվում են որպես զինվորական ծառայության հետ չկապված դեպքեր:*

## **Զ. Դժբախտ պատահար**

### **1. Ալիկ Մովսեսյան**

Պայմանագրային զինծառայող Ալիկ Մովսեսյանի վարած ավտոմեքենան 2023 թվականի հունվարի 26-ին, ժամը 18:00-ի սահմաններում ընթացքի ժամանակ պայթել է Գետավան-Խնկավան ավտոճանապարհին, ինչի հետևանքով Ա. Մովսեսյանը տեղում մահացել է: Դեպքի պահին պայմանագրայինը գտնվել է հանգստի մեջ:

Վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ ՏՔՎ Մարտակերտի բաժնի կողմից:

### **2. Արթուր Գալստյան**

Ազատ հերթափոխում գտնվող պայմանագրային զինծառայող Արթուր Գալստյանն իր ավտոտնակում պրոպանի գազաբալոնի պայթյունի հետևանքով մահացել է: Դեպքը տեղի է ունեցել 2023 թվականի մայիսի 27-ին: Վարույթն իրականացրել է ԱՀ ՔԿ Ստեփանակերտի բաժինը: